ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՎԻՀՄԱՊՁԲ 18/13

ք. Վանաձոր «20» 09 2018թ.

«ՍՍՆ» ՍՊԸ-ն, այսուհետ «Մատակարար», ի դեմս տնօրեն Ա.Արդարյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից , և «Վանաձորի Ինֆեկցիոն Հիվանդանոց» ՊՓԲԸ-ն, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս տնօրեն Ռ. Հ. Չիլինգարյանի, ով գործում է կանոնադրության և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի (բանակցային ընթացակարգով գնումներ) հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով սահմանված պայմաններով Մատակարարը Գնորդին կմատակարարի նշված ծառայությունները՝ Ձայնային ազդանշանի համակարգի մոնտաժ, տեղադրում և ծրագրավորում: Ծառայության արժեքը սահմանվում է 20000 (քսան հազար) ՀՀ դրամ՝:

2. Մատակարարման պայմաններ

2.1 Մատակարարմը ծառայությունը մատուցում է գնորդին:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Մատակարարն իրավունք ունի.
Գնորդի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքները չընդունելու դեպքում հրաժարվել պայմանագրը կատարելուց և Գնորդից պահանջել վճարելու վնասների փոխհատուցում:

3.2 Մատակարարը պարտավոր է.

3.2.1 Գնորդին մատուցել պատշաճ ծառայություն:

3.2.2 Գնորդին ապահովել համապատասխան տեղեկատվությամբ և նոր գնացուցակներով:

3.3 Գնորդն իրավունք ունի.

3.3.1 Մատակարարի կողմից անպատշաճ որակի ծառայություն մատակարարելու դեպքում պահանջել փոխարինել որակյալ ծառայություն:

3.4 Գնորդը պարտավոր է.

3.4.1 Ընդունել իր պատվերի համաձայն մատակարարված ծառայությունը:

3.4.2 Ծառայության վերաբերյալ իր առարկությունները դրանք ստանալուց հետո հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով 24 ժամվա և գրավոր ձևով 72 ժամվա ընթացքում ներկայացնել Մատակարարին:

3.4.3 Ժամանակին և ամբողջությամբ վճարել Մատակարարից ստացված ծառայության դիմաց:

4. Հանձնում և ընդունում

4.1 Ծառայությունը գնորդին կմատակարարվի (կհանձնվի) Գնորդի գտնվելու, կամ նրա կողմից նշված վայրում (հասցեն՝ ք. Վանաձոր, Սևակի 51):

4.2 Մատուցված ծառայությունը գնորդի կողմից կընդունվի միայն նրա ներկայացուցչի կողմից դրա զննումն իրականացնելուց հետո:

4.3 Կատարված ծառայության զննման ընթացքում պետք է ստուգվի և պարզվի Ծառայության տեսականու, քանակի և որակի համապատասխանությունը Գնորդի պատվերին:

5. Հաշվարկների կարգը և ձևը

5.1 Մատուցված ծառայության դիմաց Գնորդը վճարումներն իրականացնում է Մատակարարի կողմից ծառայության հետ ներկայացվող հաշիվ-ապրանքագրերի հիման վրա, ծառայությունը ստանալու օրվանից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

5.2 Սույն պայմանագրի 5.1 կետում նշված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա վճարումները Գնորդը իրականացնում է անմիջապես Մատակարարին՝ անկանխիկ ձևով:

5.2.1 Գնորդի կողմից վճարն ուշացնելու դեպքում «Մատակարարը» իրավունք ունի կիրառել տույժ՝ ուշացած յուրաքանչյուր օրվա չվճարված գումարի 0.05% չափով: